ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

13 դեկտեմբերի ուրբաթ 2024
տպագրության ԺԳ տարի

175
(3025)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ԻՆՉՈՒ Է ՀԵՏԱՁԳՎԵԼ ԷԿՈՊԱՐԵԿԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԵԿՆԱՐԿԸ

Սյունիքում էկոպարեկային ծառայության մեկնարկը հետաձգվել է, քանի որ մարզում լայն թափով վարչական շենքեր են նորոգում եւ վերանորոգում Ծառայության համար: Սովետական միության Անտառային տնտեսությունը 30 տարի անց դարձել է էկոպարեկային ծառայություն, որը պետական բյուջեի վրա, կարծես, թանկ է նստում:

«Ժողովուրդ» օրաթերթը 2025 թվականի պետբյուջեի նախագծի քննարկման ժամանակ ՀՀ շրջակա միջավայրի նախարար Հակոբ Սիմիդյանի ելույթից տեղեկացավ, որ միայն էկոպարեկային ծառայության հիմնադրումը շրջակա միջավայրի նախարարության բյուջեն 38%-ով ավելացրել է: Էկոպարեկային ծառայության ներդրումը նախարարության համար արժեցել է 5.7 միլիարդ դրամ՝ գրեթե 147 հազար դոլար:

«Ազատության» հետ զրույցում ծառայության ղեկավար Վլադիմիր Կիրակոսյանն ասել էր, որ էկոպարեկային ծառայությունը, որը պետք է առնվազն Սյունիքի մարզում գործեր ամբողջ ծավալով, այս տարեվերջին դեռ չի գործի. ժամկետները հետաձգվել են մինչեւ գալիք տարվա փետրվարի 26-ը:

Էկոպարեկային ծառայությունը ծախսել է 58 մլն 504 հազար դրամ Սյունիքի մարզային վարչության Գորիս քաղաքի տեղամասի վարչական շենքի, Ջանգեզուրի տեղամասի վարչական շենքի ապամոնտաժման եւ վերանորոգման համար, իսկ 3-րդ 9 մլն 120 հազար դրամն էլ հատկացվել է Երեւանում էկոպարեկային ծառայության վարչական շենքի ապամոնտաժման եւ վերանորոգման աշխատանքների համար:

Այս գումարով Նիկոլ Փաշինյանը կարող էր գրեթե 4 անգամ Սեւանի շուրջ հեծանվավազք կազմակերպել:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ Գյումրու համայնքապետի ժամանակավոր պաշտոնակատարի նախնական ընտրություններում հաղթած Սարիկ Մինասյանը, ով անկուսակցական է, Նիկոլ Փաշինյանի պահանջները բավարարելու համար շտապել է ՔՊ-ին անդամակցության հայտ ներկայացնել: Նշենք, որ կուսակցության անդամակցությունը որոշում է ՔՊ վարչությունը: Մեր տեղեկություններով՝ ՔՊ primaries-ին մասնակցած բայց չհաղթած, մասնագիտությամբ բժիշկ-ստոմատոլոգ Վահագն Մկրտչյանը՝ Աննա Հակոբյանի ազգականը, նշանակվելու է փոխքաղաքապետ: Վերջինս 2023 թվականին եւս զբաղեցրել է Գյումրու փոխքաղաքապետի պաշտոնը:

Արմավիրի մարզի Փարաքար համայնքում Գյումրու օրինակով արտահերթ ընտրություններ կլինեն: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ դեկտեմբերի 11-ին համայնքի ավագանին նիստ է հրավիրել՝ քաղաքապետ ընտրելու օրակարգով, սակայն 3 խմբակցությունները՝ ՔՊ-ն, «Ապրելու երկիր»-ը եւ «Դավիթ Մինասյան» դաշինքը, թեկնածու չեն առաջադրել, ավագանին իր կազմից համայնքապետ չի ընտրել: Օրենքի համաձայն, եթե 14 օրվա ընթացքում ավագանին քաղաքապետ չընտրի, ապա կլուծարվի, եւ նոր ընտրություններ կլինեն՝ ինչպես Գյումրիում: Իշխանությունները մտադիր են հենց այս ճանապարհով էլ գնալ. համայնքապետ չեն առաջադրի, որպեսզի նոր ընտրություններ լինեն: Ի տարբերություն Գյումրու, սակայն, այստեղ խոչընդոտներ չկան: ԺՊ նշանակելու անհրաժեշտություն չկա, քանի որ կա համայնքապետի տեղակալ՝ Կարապետ Արթենյանը, ով օրենքով պետք է կազմակերպի ընտրությունները: Հիշեցնենք՝ նոյեմբերի 18-ին հայտնի դարձավ, որ Փարաքարի ՔՊ-ական համայնքապետ Լյուդվիգ Գյուլնազարյանը, աղմկահարույց սպանության կենտրոնում հայտնվելուց հետո, հրաժարական է տվել: Խոսքը նոյեմբերի 16-ին Երեւանի 17-րդ թաղամասում տեղի ունեցած սպանության մասին է, որի ժամանակ հրազենային վնասվածք էր ստացել Երեւանի 42-ամյա բնակիչ Արթուր Մանուկյանը: Սպանության վայրում էր եղել եւ այս թեմային մասնակից էր նաեւ Փարաքարի ՔՊ-ական համայնքապետ Լյուդվիգ Գյուլնազարյանը: Արյունոտ այս պատմությունից հետո ՔՊ-ական համայնքապետը հեռացավ պաշտոնից, եւ Փարաքարը մինչ օրս ղեկավար չունի: Հիշեցնենք, որ Փարաքարում համայնքապետի ընտրության ոդիսականը վաղուց է սկսվել, երբ ՔՊ-ն «զոռբայությամբ» ու ճնշումների միջոցով Փարաքարում խլեց իշխանությունը ու իր թեկնածու Լյուդվիգ Գյուլնազարյանին «դարձրեց» քաղաքապետ: Այսպիսով՝ դեռ այս տարվա մայիսի 21-ին «Ապրելու երկիր» խմբակցությունը նախաձեռնել էր համայնքի ղեկավար Դավիթ Մինասյանին անվստահություն հայտնելու եւ խմբակցության ղեկավար Վալոդյա Գրիգորյանին համայնքի ղեկավար ընտրելու գործընթաց, որին իր ստորագրությամբ միացել էր ավագանու անկախ անդամ Էմին Երիցյանը: Նույն օրը համայնքի ղեկավարի հրաժարականի արդյունքում տեղի ունեցավ համայնքի ղեկավարի արտահերթ ընտրություն, սակայն ՔՊ-ի ճնշումների ներքո ավագանու անկախ անդամ Էմին Երիցյանը ընտրեց ՔՊ թեկնածուին: Ինչպես «Ապրելու երկիր»-ն էր հայտարարել՝ Երիցյանի եւ իր ընտանիքի անդամների նկատմամբ իրականացվել են ճնշումներ իշխանական տարբեր ներկայացուցիչների կողմից, իսկ ՔՊ-ի թեկնածու Լյուդվիգ Գյուլնազարյանը ընտրվեց համայնքի ղեկավար:



«Ժողովուրդ» օրաթերթը պետական գնումների կայքից տեղեկանում է, որ ՀՀ վարչապետի աշխատակազմը 700 հազար դրամ ընդհանուր արժեքով ձեռք է բերել 100 շապիկ: 50 շապիկն արժեցել է 6500 դրամ, իսկ մյուս 50 շապիկը՝ 7500 դրամ: Թե շապիկներն ինչի համար են գնվել, պայմանագրում այդ մասին ոչինչ նշված չէ: Վարչապետի աշխատակազմին զուգահեռ ներքին գործերի նախարարությունը գնել է 10 հատ կանացի շարֆ, որոնց մեկ հատի արժեքը կազմել է 10 հազար դրամ, ընդհանուր առմամբ՝ 100 հազար դրամ գումար է ծախսվել: Հարցական է, թե նման ճոխ գնումներն ում համար են:

ԶՐՈՒՅՑ

«ԵԹԵ ԻՆՁ ԷԼ ԱՍՎԵՐ, ՄԱՆԴԱՏՍ ՎԱՅՐ ԿԴՆԵԻ», Գ. ՄԵԼՔՈՆՅԱՆ

ՔՊ-ի հաջորդ թիրախը պատգամավոր Գագիկ Մելիքոնյանն է: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ վերջինս խմբակցության նիստի ժամանակ փորձել է պատշտանել Հովիկ Աղազարյանին՝ ասելով, որ նրա հետ շատ վատ են վարվել, պետք չէր անձնական նամակագրությունները հանրայնացնել:

Գագիկ Մելքոնյանի այս հայտարարությունը հունից հանել է ՔՊ վերնախավին, քանի որ Աղազարյանին պաշտպանելը հիմա ՔՊ-ում աններելի հանցանք ու դավաճանություն են համարում. ուստի չի բացառվում, որ Աղազարյանից ու Ասլանյանից հետո քավության նոխազ դառնա նաեւ Գագիկ Մելքոնյանը՝ «դավաճանության» մեղադրանքով:

«Ժողովուրդ» օրաթերթը թեմայի շուրջ զրուցել է պատգամավորի հետ:

-Պարոն Մելքոնյան, Ձեր թիմակիցներին ասում են, որ Հովիկ Աղազարյանից ու Հակոբ Ասլանյանից հետո հաջորդ պատգամավորը, որը խմբակցությունից հեռացվելու է, Դուք եք, քանի որ հանդգնել եք պաշտպանել Աղազարյանին:

-Ո՞վ է ասել նման բան: Ես ո՞ւմ եմ պաշտպանել:

-Դուք թիմի հետ քննարկումների ժամանակ փորձել եք պաշտպանել Հովիկ Աղազարյանին, ասել եք՝ սխալ են վարվել Հովիկ Աղազարյանի հետ, նրա նամակագրությունները չպետք է հանրայնացվեին:

-Ո՛չ, ես միայն ասել եմ՝ այդ մարդը պետք է որոշի՝ մանդատ դնի՞, թե՞ ոչ: Ամեն պատգամավոր ինքն է որոշում մանդատի հարցը:

-Նիկոլ Փաշինյանը հորդորել էր մանդատը վայր դնել, ինչը նա չարեց, դրա համար էլ հեռացվեց ՔՊ-ից:

-Նիկոլ Փաշինյանը կուսակցության ղեկավարն է, եթե խնդրել է, պետք է անխոս դներ:

-Այսինքն, կարծում եք, որ հիմա պետք է Հովիկ Աղազարյանը վա՛յր դնի մանդատը:

-Այո՛, եթե կուսակցության ղեկավարը հորդորել է, պետք է այդպես արվեր, եթե ինձ էլ ասեր՝ մանդատս կդնեի, հաջորդ օրվանից գործի չէի գա:

- Պարոն Մելքոնյան, իսկ Հակոբ Ասլանյանի հետ ինչո՞ւ խմբակցությունն այդքան վատ վարվեց:

-Ես տեղյակ չեմ, խմբակցության նիստին չեմ եղել, ողջ օրը հիվանդանոցում եմ եղել:

Հիշեցնենք, որ հոկտեմբերի 14-ին ArmLur.am լրատվականին տված հարցազրույցի ընթացքում Հովիկ Աղազարյանը խոստովանել էր կաշառք առաջարկելու մասին լուրերի իսկությունը, որից հետո նրա շուրջ խմորումներ սկսեցին ծավալվել: Նիկոլ Փաշինյանը Հովիկ Աղազարյանին հորդորել էր վայր դնել մանդատը, սակայն Աղազարյանը չէր ընդառաջել, որի հետեւանքով հեռացվեց «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունից: Հաջորդ առավոտյան պատգամավորը հայտարարեց ՔՊ խմբակցությունից դուրս գալու մասին:

ՔՊ վարչության նիստում, սակայն, կուսակցությունից Աղազարյանին հեռացնելու համար հիմքեր գտնելու քննարկման ժամանակ ցուցադրվել էր պատգամավորի հեռախոսային անձնական խոսակցությունը, այդ թվում՝ ինֆորմացիայի արտահոսքի վերաբերյալ բազմաթիվ փաստեր են եղել:

Հովիկ Աղազարյանի շուրջ ստեղծված իրավիճակը քննարկելու եւ պարզելու համար Աղազարյանի մտերիմ, պատգամավոր Հակոբ Ասլանյանն առաջարկել է աշխատանքային խումբ ստեղծել, որից խմորումներ են սկսվել այս անգամ Ասլանյանի շուրջ: Դեկտեմբերի 11-ին Ասլանյանը հայտնեց, որ մեկ ամսով դադարեցնում է ՔՊ խմբակցությանն իր անդամակցությունը, ինչին հաջորդեց ՔՊ խմբակցությունից նրան հեռացնելու որոշումը:

«Ժողովուրդ» օրաթերթին հասած տեղեկությունների համաձայն՝ հաջորդը Գագիկ Մելքոնյանն է:

Զրուցեց ՍՈՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆԸ

ԼՈՒՐԵՐ

ՀԱՋՈՐԴ ԱՆՏԵՂՅԱԿԸ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏՆ ԷՐ

ՔՊ-ական պատգամավոր Դավիթ Առուշանյանը դրեց մանդատը, սակայն Շիրակի մարզպետ Մուշեղ Մուրադյանը տեղյակ չէր, որ դա արվել է իրեն փոխարինելու համար:

«Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ մանդատը վայր դրած ՔՊ-ական պատգամավոր Դավիթ Առուշանյանը նշանակվելու է Շիրակի մարզպետ: Սակայն Մուշեղ Մուրադյանը տեղյակ չէր, որ ինքն այլեւս մարզպետ չի լինելու:

«Ես այս պահին նման տեղեկատվություն չունեմ»,- առավոտյան կառավարության շենքի մոտ լրագրողներին ասաց մարզպետը՝ անդրադառնալով տեղեկություններին, որ մարզպետ է նշանակվելու Դավիթ Առուշանյանը, ով մեկ օր առաջ արդեն հրաժարվել էր պատգամավորի մանդատից:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ԵՐԲ ԿԿԱՅԱՆԱՆ ԳՅՈՒՄՐՈՒ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

«Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքում նշանակվել է ավագանու արտահերթ ընտրություններ, որը տեղի կունենա 2025 թվականի փետրվարի 20-ից:

Հավելենք, որ Կառավարությունը դադարեցնում է Գյումրի համայնքի ավագանու լիազորությունները:

Հիշեցնենք, որ ՔՊ-ն պարտվեց Գյումրիում. «Լուսավոր Հայաստան»-ի նախկին պատգամավորը հաղթեց իշխանություններին:

Գյումրիում ավարտվել են համայնքապետի ժամանակավոր պաշտոնակատարի ընտրությունները:

Ընտրությունների արդյունքում առավելագույն ձայները ստացավ Սարիկ Մինասյանը, որը, վարչապետի որոշմամբ, կնշանակվի Գյումրու քաղաքապետի պաշտոնակատար, իսկ արդեն համայնքապետի ընտրությունների ժամանակ նա կգլխավորի ՔՊ ցուցակը: Նա ստացել է 253 ձայն:

Սարիկ Մինասյանը Միասնական սոցիալական ծառայության Գյումրու տարածքային կենտրոնի տնօրենն է: Ուշագրավ է, որ վերջինս իշխող կուսակցության անդամ չէ:

2018 թվականին ընտրվել է Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավոր «Լուսավոր Հայաստան» կուսակցության թիվ 11 ընտրատարածքի տարածքային ընտրական ցուցակով:

Նշենք, որ Սարիկ Մինասյանից բացի, համայնքապետի ժամանակավոր պաշտոնակատարի ընտրություններին մասնակցում էին նաեւ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավորներ Դավիթ Առուշանյանը, Կարեն Սարուխանյանը, Գյումրու նախկին փոխքաղաքապետ Վահագն Մկրտչյանը, Գյումրու ավագանու անդամ Շավարշ Արամյանը, 33-ամյա Լեւոն Անանյանը, Շիրակի մարզպետի աշխատակազմի զարգացման ծրագրերի մշակման եւ իրացման բաժնի ավագ մասնագետ Էմմա Բարսեղյանը:

Է. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆԸ ԿՏՐԱՄԱԴՐՎԻ

Կառավարությունն իր երեկվա՝ դեկտեմբերի 12-ի նիստում որոշեց 44-օրյա պատերազմի հետեւանքով քաղաքացիական անձանց շրջանում անհայտ կորածների ընտանիքներին սոցիալական աջակցության միջոցառումը երկարաձգել եւս երկու ամսով՝ նոյեմբեր-դեկտեմբեր ամիսների համար: Խոսքը ամսական 300 հազարական դրամ աջակցության մասին է, որի համար առկա է լրացուցիչ 6,6 մլն դրամի ֆինանսական միջոցների հատկացման անհրաժեշտություն:

Այս աջակցությունը պետք է տրամադրվի 11 անհայտ կորած անձանց ընտանիքներին:

«ՀԱՅԱՍՏԱՆԸ ԵՎ ԱԴՐԲԵՋԱՆԸ ԵՐԲՈՐԴ ԿՈՂՄԻ ԿԱՐԻՔ ՉՈՒՆԵՆ». ՀԱՋԻԵՎ

Ադրբեջանն ու Հայաստանը խաղաղ բանակցություններ վարելու համար միջնորդի կարիք չունեն: Լրագրողներին ասել է Ադրբեջանի նախագահի օգնական-Նախագահի աշխատակազմի արտաքին քաղաքականության վարչության ղեկավար Հիքմեթ Հաջիեւը:

«Բաքուն եւ Երեւանը խաղաղ բանակցություններ են վարում, եւ երրորդ կողմի մասնակցության կարիք չկա, ընդհակառակը, տարածաշրջանի գործերին այլ կողմերի միջամտությունը վնասում է հարաբերությունների կարգավորմանը»,- հավելել է նա:

ՀՀ-ԻՆ Է ՎԵՐԱԴԱՐՁՎԵԼ ԱՕԿՍ-Ի ՇԵՆՔԸ

Դատարանի վճռով (հաշտության համաձայնություն) Հայաստանի Հանրապետությանն է վերադարձվել Երեւանի Աբովյան 3 հասցեում գտնվող «ԱՕԿՍ»-ի շենքը՝701,4 քմ մակերեսով եւ 453 քմ մակերեսով հողամասը. շուկայական արժեքը՝ շուրջ 5 միլիարդ դրամ: Այս մասին «Ֆեյսբուք»-ի իր էջում գրել է ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը:

Օրեր առաջ Փաշինյանը հայտնել էր, որ #հատիկառհատիկ հեշթեգով ներկայացնելու է արդեն իսկ պետությանը վերադարձված գույքերի ցանկը՝ հատիկ առ հատիկ:

ԿՐԵՄԼԸ ՔՆՆԱԴԱՏԵԼ Է ԻՍՐԱՅԵԼԻ ՀԱՐՎԱԾՆԵՐԸ

Իսրայելի գործողությունները Գոլանի բարձունքներում եւ բուֆերային գոտում հազիվ թե նպաստում են Սիրիայում իրավիճակի կայունացմանը: Այս մասին ասել է ՌԴ նախագահի մամուլի քարտուղար Դմիտրի Պեսկովը:

«Իհարկե, հարվածներ հասցնելը, Գոլանի բարձունքների շրջանում, բուֆերային գոտում գործողությունները հազիվ թե նպաստում են իրավիճակի կայունացմանը առանց այն էլ ապակայունացված Սիրիայում», - Պեսկովի խոսքերն է մեջբերում «Ինտերֆաքս»-ը:

Կրեմլի ներկայացուցիչը նշել է, որ Մոսկվան կցանկանար տեսնել Սիրիայում իրավիճակի արագ կայունացում, որպեսզի արդյունքում լինեն «իրավիճակն օրինական հուն տեղափոխելու որոշ հեռանկարներ»:

Օրերս Իսրայելի զինվորականները դիրքեր են գրավել Գոլանի բարձունքներում գտնվող բուֆերային գոտում՝ Սիրիայում իշխանափոխության մասին լուրերի ֆոնին: Իսրայելի իշխանությունները սա անվանել են ժամանակավոր միջոց:

Բացի այդ, դեկտեմբերի 8-ին Սիրիայում իշխանության տապալումից ի վեր Իսրայելը շարունակ հարվածներ է հասցնում երկրի ռազմավարական օբյեկտներին: Իսրայելի բանակը հայտարարել է վերջին 48 ժամում Սիրիայում 480 հարված հասցնելու մասին: Իր հերթին «Մարդու իրավունքների սիրիական դիտարան»-ն այս օրերի ընթացքում արձանագրել է Իսրայելի կողմից 352 ավիահարված Սիրիայի 13 նահանգներում:

ՌԴ ԱԳՆ–Ն ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻՆ ԿՈՉ Է ԱՐԵԼ ՉՄԵԿՆԵԼ ԱՄՆ

Ռուսաստանի արտաքին գործերի նախարարությունը ռուսաստանցիներին կոչ է անում զերծ մնալ մասնավոր եւ աշխատանքային ուղեւորություններից դեպի Միացյալ Նահանգներ եւ նրա դաշնակից երկրներ՝ ԱՄՆ իշխանությունների կողմից կամայական կալանավորման վտանգի պատճառով: Այս մասին հայտարարել է ՌԴ ԱԳՆ պաշտոնական ներկայացուցիչ Մարիա Զախարովան ճեպազրույցի ընթացքում:

«Պաշտոնական Վաշինգտոնի մեղքով փլուզման եզրին հայտնված ռուս-ամերիկյան հարաբերություններում աճող առճակատման համատեքստում մասնավոր կամ պաշտոնական պատճառներով Միացյալ Նահանգներ մեկնելը հղի է լուրջ վտանգներով», - Զախարովայի խոսքերն է մեջբերում «Ինտերֆաքս» գործակալությունը: Զախարովան նշել է, որ գերատեսչությունը բազմիցս անդրադարձել է այս խնդրին, սակայն առաջին անգամ է, որ այդ հարցի վերաբերյալ ուղղակի դիմում է հնչում ԱԳՆ-ից:

ՔՊ-ԱՍԼԱՆՅԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ՍԿԻԶԲԸ

ՈՐՏԵՂ ՄԽԱԼՎԵՑ ՀԱԿՈԲ ԱՍԼԱՆՅԱՆԸ

Դեկտեմբերի 11-ին ՔՊ խմբակցության պատգամավոր Հակոբ Ասլանյանը, որին ընդամենը օրեր առաջ ՔՊ-ականները 3 պատերազմի մասնակից հերոս էին համարում, մի լավ քարկոծություններից հետո հեռացվեց խմբակցությունից:

Իսկ ինչից սկսվեց ամեն բան:

Դեկտեմբերի 11-ին Հակոբ Ասլանյանը, ինչպես ինքն է բնորոշում, էմոցիոնալ ու տաք գլխով հայտարարեց, որ մեկ ամսով դադարեցնում է անդամակցությունը ՔՊ խմբակցությանը:

Իսկ պատճառը իր գործընկերոջ՝ Հովիկ Աղազարյանի շուրջ տեղի ունեցող իրադարձություններն էին: Պատգամավորը պահանջում էր ՔՊ խմբակցությանը պատգամավորների խումբ կազմել, որոնք կուսումնասիրեն ու նոր որոշում կկայացնեն Հովիկ Աղազարյանի վերաբերյալ:

Պատգամավորի այս հայտարարությունից հետո 3 պատերազմների մասնակից Հակոբ Ասլանյանն ընդամենը ժամերի ընթացքում ՔՊ-ի համար վերածվեց դավաճանի եւ դասալիքի:

Այնուհետեւ, ՔՊ-ի սառը ցնցուղից հետո Հակոբ Ասլանյանը փոշմանում է ու մեղայական հրապարակում իր ֆեյսբուքյան էջում, որ իր հայտարարությունը սխալմունք է եղել:

Համացանցից օգտվելու հմտություններ չունեցող Հակոբ Ասլանյանը, սակայն, ավելի է խճճում իրավիճակը: «Ֆեյսբուք»-ի իր էջում նա հրապարակում է իր մեղայականի screenshot-ները եւ մատնում, որ փոշմանելու տեքստը իր հոգեզավակ, ԲՏԱ նախարար Մխիթար Հայրապետյանն է գրել:

ՔՊ-ականները ավելի են գրգռվում այս մատնությունից ու ուշ երեկոյան հրատապ նիստ են անում ու հեռացնում Հակոբ Ասլանյանին խմբակցությունից. ինչպես պարզաբանում են ՔՊ-ից՝ լրջագույն կարգապահական խախտման, ինչպես նաեւ կուսակցության որդեգրած արժեքների եւ քաղաքական ուղեգծի հետ խիստ անհամատեղելի վարքի պատճառով:

Հարկ է հիշել նաեւ, որ անգամ պատերազմում պարտությունից ու կորուստներից հետո Հակոբ Ասլանյանը անձնուրաց պաշտպանում էր ՔՊ-ին ու Նիկոլ Փաշինյանին, ինչի համար շատ դեպքերում հանրության կողմից քննադատվում էր:

Բայց, արի ու տես, որ ընդամենը օրեր առաջ 3 պատերազմի մասնակից ու հոգով-սրտով ՔՊ-ական Հակոբ Ասլանյանը այսօր տհաճ ձեւով վարկաբեկվում է հենց իր թիմակիցների կողմից:

ՔՐԻՍՏԻՆԵ ՄՈՒՇԵՂՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

«ԵՐԵՎԱՆԻ ԱՎՏՈԲՈՒՍԸ» ԱԶԱՏՎԵՑ ՄԱՔՍԱՏՈՒՐՔԻՑ

Կառավարությունն իր երեկա՝ դեկտեմբերի 12-ի նիստում որոշեց մաքսատուրքից ազատել «ԵՐԵՎԱՆԻ ԱՎՏՈԲՈՒՍ» փակ բաժնետիրական ընկերությանը:

Այս ընկերության կողմից մայրաքաղաքի բնակչության կանոնավոր տրանսպորտային սպասարկումն ապահովելու համար նախատեսվում է շարունակել ավտոբուսային երթուղիների շահագործման աշխատանքների կազմակերպումը քաղաքային նշանակության նոր ներկրվող թվով 171 ավտոբուսներով՝ Երեւանի տրանսպորտի նոր երթուղային ցանցի ներդրման գործընթացի շրջանակներում:

Նախատեսվում է ներկրել Zhongtong մակնիշի Euro 5 բնապահպանական ստանդարտի, քաղաքային կոնֆիգուրացիայի, հաշմանդամություն ունեցող անձանց սպասարկման համար հարմարեցված, առնվազն 22+1 նստատեղերի առկայությամբ եւ 38 կանգնած ուղեւորների տեղափոխման հնարավորությամբ թվով 171 միջին դասի ավտոբուսներ՝ ինչը թույլ կտա քաղաքային տրանսպորտի թվով 67 ավտոբուսային երթուղիները համալրել նոր շարժակազմով եւ ավելացնել ավտոբուսային երթուղիների քանակը եւս 8-ով, միաժամանակ՝ ուղեւորափոխադրումների ծավալն ավելացնելով շուրջ 20.4 մլն ուղեւորով:

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել 6.3 մլրդ դրամի ներդրում ավտոբուսների ձեռքբերման համար:

Ներկայումս առկա է 1433 աշխատատեղ 391 հազ դրամ միջին ամսական աշխատավարձով: Ներդրումային ծրագրի շրջանակներում մինչեւ 2026 թվականը նախատեսվում է աշխատատեղերի թվաքանակը հասցնել մինչեւ 1878-ի՝ 407 հազ դրամ միջին ամսական աշխատավարձով:

Արտոնություն ստանալու համար ներկայացված ապրանքների արժեքը կազմում է 6.3 մլրդ դրամ: Մաքսատուրքից ազատման արտոնությունը գնահատվում է 945 մլն դրամ:

ԲԱՅՐԱՄՈՎԸ ԿՐԿԻՆ ԱՆԴՐԱԴԱՐՁԵԼ Է ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ

Հայաստանի հետ խաղաղության պայմանագրի նախագիծը ներառում է 17 կետ, որից 15-ն արդեն համաձայնեցված է, մյուս 2 կետի շուրջ աշխատանքները շարունակվում են, ասել է ադրբեջանի ԱԳ նախարար Ջեյհուն Բայրամովը:

«Նախաբանի տեքստը եւ 15 կետերը գրեթե ամբողջությամբ համաձայնեցված են: Իսկ 2 կետերի շուրջ մենք բաց հարցեր ունենք. դրանց վրա աշխատանքները շարունակվում են: Արդեն եղել է բանակցությունների եւ տեքստերի փոխանակման մի քանի փուլ: Լիովին համաձայնեցված տարբերակի դեռ չի հաջողվել հասնել: Աշխատանքը շարունակվում է», - ասել է Բայրամովը:

Միեւնույն ժամանակ նա ասել է, որ «խաղաղության հասնելու գործընթացը բարդացնում է Հայաստանի Սահմանադրությունը, որը տարածքային պահանջներ է պարունակում Ադրբեջանի նկատմամբ»:

«Մենք համաձայն չենք այն փաստարկների հետ, որոնք Հայաստանը ներկայացնում է վերջին շրջանում: Հայաստանի Սահմանադրական դատարանի վերջին որոշումը էլ ավելի է բարդացրել իրավիճակը: Մասնավորապես, որոշում է կայացվել Հայաստանի Սահմանադրության նախաբանի անփոփոխելիության մասին: Հենց նախաբանում անդրադարձ է կատարվում անկախության հնչակագրին, որն իր հերթին պարունակում է տարածքային պահանջներ Ադրբեջանի դեմ», - նշել է նա:

Բայրամովի խոսքով՝ հետպատերազմական շրջանում Ադրբեջանն ու Հայաստանը շարունակել են խաղաղության շուրջ բանակցությունները եւ կարծիքների փոխանակումը խաղաղության պայմանագրի տեքստի շուրջ:

«Ադրբեջանի եւ Հայաստանի միջեւ բանակցությունները շարունակվում են խաղաղության պայմանագրի շուրջ, շարունակվել են տեքստային փոխանակումները եւ այստեղ, չնայած բաց հարցերին, ակնհայտ առաջընթաց է գրանցվել», - նշել է նա:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանը 2024-ի սեպտեմբերի 26-ի որոշման մեջ նշվում է, որ Սահմանադրության նախաբանում Անկախության հռչակագրի հղումը վերաբերում է բացառապես հռչակագրի այն դրույթներին, որոնք ամրագրված են Սահմանադրության հոդվածներում:

«ՀՀ Սահմանադրության ոչ մի դրույթ տարածքային պահանջներ չի պարունակում հարեւան երկրների նկատմամբ»,- որոշման հրապարակումից հետո պնդել էր Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը:

ՆԱԽԿԻՆ ԴԱՏԱԽԱԶԻ ԳՈՐԾԻ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ

ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԸ

«Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ Ադրես Անդրանիկի Գրիգորյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, հանդիսանալով հայտարարատու պաշտոնատար անձ, զբաղեցնելով ՀՀ Արմավիրի մարզի դատախազության դատախազի պաշտոնը, երկու դեպքում տարեկան հայտարարագրերում ներկայացրել է կեղծ տվյալներ եւ թաքցրել է հայտարարագրման ենթակա տվյալները: Ի դեմ՝ նախկին դատախազի շուրջ ուշագրավ իրավիճակ էր ստեղծվել, ու այս նոր մեղադրանքը խիստ կասկածների տեղիք է տալիս:

«Ժողովուրդ» օրաթերթը ձեզ է ներկայացնում Գլխավոր դատախազության պաշտոնական պատասխանը՝ նախկին դատախազի վերաբերյալ դատարան ուղարկված գործի առնչությամբ:

«Դատախազը 2024 թվականի դեկտեմբերի 5-ին հաստատել է հայտարարատու պաշտոնատար անձի՝ նախկին դատախազի, վերաբերյալ մեղադրական եզրակացությունը եւ վարույթի նյութերի հետ հանձնել Հակակոռուպցիոն դատարան:

Հակակոռուպցիոն կոմիտեում քննված քրեական վարույթով պարզվել է, որ հայտարարատու պաշտոնատար անձը, զբաղեցնելով Արմավիրի մարզի դատախազության դատախազի պաշտոնը, երկու դեպքով տարեկան հայտարարագրերում ներկայացրել է կեղծ տվյալներ եւ թաքցրել է հայտարարագրման ենթակա տվյալներ: Բացի այդ, թիվ ՎԴ/6209/05/23 վարչական գործով դատարան է ներկայացրել կեղծ ապացույց:

Մասնավորապես՝ կարգապահական տույժի արդյունքում աշխատանքից ազատված նախկին պաշտոնատար անձը, իր նկատմամբ կարգապահական տույժ նշանակելու եւ աշխատանքից ազատելու վերաբերյալ իրավական ակտերը կասեցնելու մասին միջնորդությունը Վարչական դատարանի կողմից մերժվելուց հետո, դրանք բեկանելու հիմքեր ստեղծելու նպատակով, Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի Մրգաշատ բնակավայրի վարչական ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատարից ձեռք է բերել կեղծ տեղեկանք այն մասին, թե իբր Մրգաշատ բնակավայրի համապատասխան հասցեում իր հետ համատեղ բնակվում են հայրը, մայրը, քույրը, որ ընտանիքում հիմնական աշխատանք միայն ինքն ունի եւ միայն ինքն է հոգում ընտանիքի հոգսն այն դեպքում, երբ նրա կինը, քույրն ու հայրն աշխատել են եւ ստացել կայուն եկամուտ:

2023 թվականի օգոստոսի 28-ին Վերաքննիչ վարչական դատարան ներկայացրած վերաքննիչ բողոքում նախկին դատախազը կցել է վերոնշյալ՝ կեղծ ապացույց հանդիսացող տեղեկանքը:

2023 թվականի հոկտեմբերի 11-ին Վերաքննիչ վարչական դատարանը մերժել է նախկին դատախազի վերաքննիչ բողոքը: Վերաքննիչ վարչական դատարանի դատական ակտի դեմ նախկին դատախազի կողմից բերվել է վճռաբեկ բողոք, որի քննության արդյունքում Վճռաբեկ դատարանը 2024 թվականի մայիսի 24-ին բավարարել է բողոքը, հիմք ընդունելով կեղծ ապացույց հանդիսացող տեղեկանքը՝ վերացրել է Վերաքննիչ վարչական դատարանի որոշումը:

Դատախազը 2024 թվականի հուլիսի 20-ին նախկին պաշտոնատար անձի նկատմամբ հարուցել է հանրային քրեական հետապնդում՝ 18.04.2003 թվականին ընդունված Քրեական օրենսգրքի 314.3-րդ հոդվածի 1-ին մասով (հայտարարագրերում կեղծ տվյալ ներկայացնելը կամ հայտարարագրման ենթակա տվյալը թաքցնելը), գործող 444-րդ հոդվածի 1-ին մասով (հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձի կողմից հայտարարագրում կեղծ տվյալներ ներկայացնելը, հայտարարագրման ենթակա տվյալները թաքցնելը) եւ 479-րդ հոդվածի 1-ին մասով (կեղծ ապացույցներ ներկայացնելը)»:

Ավելի վաղ հայտնել էինք, որ ««Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ գաղտնալսված դատախազ Ադրես Գրիգորյանը, որին գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանը գաղտնալսումից հետո աշխատանքից հեռացրեց, դատարանում հաղթել է Աննա Վարդապետյանին:

Այս տարվա՝ 2024 թվականի մայիսի 24-ինմ Վճռաբեկ դատարանը բավարարել է Ադրես Գրիգորյանի Վճռաբեկ բողոքը: Ըստ Վճռաբեկ դատարանի՝ պետք է վերացվի ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի՝ 11.10.2023 թվականի «Վերաքննիչ բողոքը մերժելու մասին» որոշումը, եւ կայացվի նոր դատական ակտ՝ վերացնել ՀՀ վարչական դատարանի 17.08.2023 թվականի որոշումը եւ Ադրես Գրիգորյանի միջնորդությունը բավարարել՝ կասեցնել ՀՀ գլխավոր դատախազի 13.07.2023 թվականի «Կոտայքի մարզի դատախազության դատախազ Ադրես Գրիգորյանի նկատմամբ կարգապահական տույժ նշանակելու մասին» որոշման եւ 14.07.2023 թվականի «Կոտայքի մարզի դատախազության դատախազ Ադրես Գրիգորյանին պաշտոնից ազատելու մասին» թիվ 313-Ա հրամանի կատարումը: Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է եւ բողոքարկման ենթակա չէ»:

Այսպիսով՝ գլխավոր դատախազը ստիպված է կատարել դատարանի վճիռը եւ գաղտնալսված դատախազին հետ ընդունել աշխատանքի:

Շարունակությունը՝ ArmLur.am լրատվական կայքում:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՆԱԽԿԻՆ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՈՐԴՈՒ ԿԱԼԱՆՔԸ 2 ԱՄՍՈՎ ԵՐԿԱՐԱՁԳՎԵԼ Է

Գյումրիու նախկին քաղաքապետ Սամվել Բալասանյանի որդին՝ Խաչատուր Բալասանյանը կշարունակի մնալ կալանքի տակ:

«Ժողովուրդ» օրաթերթին հայտնի դարձավ, որ դատարանը նախաքննական մարմնի միջնորդությունը՝ նրա կալանքը երկարացնելու մասով, երկարաձգել է եւս 2 ամսով:

«Ժողովուրդ» օրաթերթին հասած լուրերի համաձայն՝ Բալասանյանների հարազատները այս հանգամանքը խիստ ծանր են տարել ու խիստ վրդովվել են, քանի որ նախկին քաղաքապետ Սամվել Բալասանյանը ԱՄՆ-ում է եւ, առողջական վիճակով պայմանավորված, չի կարողանում գալ հասնել իր որդուն, իսկ ահա որդուն էլ պահում են կալանքի տակ՝ թույլ չտալով հասնել առողջական խնդիրներ ունեցող հորը:

Խաչատուր Բալասանյանը հոկտեմբերի 11-ին էր ձերբակալվել «Զվարթնոց» օդանավակայանում՝ ԱՄՆ մեկնելու ճանապարհին: Ապա առաջին ատյանի դատարանը 70 մլն դրամ գրավի դիմաց նրա նկատմամբ տնային կալանք էր նշանակել, ինչը դատախազությունը բողոքարկել էր:

Կրտսեր Բալասանյանը մեղադրվում է Գյումրիու Սեւ բերդ ամրոցի հարակից հողատարածքներն ապօրինի ձեռք բերելու, իսկ գործով անցնող մյուս 4 անձինք, այդ թվում՝ հայրը՝ նախկին քաղաքապետ Սամվել Բալասանյանը, հողատարածքն ապօրինի օտարելու համար:

Ք. ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԿՐԱԿՈՑՆԵՐ

ՈՒՄ ՈՐԴԻՆ Է ԿԱՍԿԱԾՅԱԼՆԵՐԻ ՑԱՆԿՈՒՄ

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ «Էրեբունի Ալկո» ընկերության սեփականատեր Հայկ Մարգարյանի որդին՝ Հովհաննես Մարգարյանը կասկածվում է Երեւանում հնչած կրակոցների մեջ:

«Ժողովուրդ» օրաթերթին հայտնի դարձավ, որ կասկածյալ Հովհաննես Մարգարյանը օրերս է ազատ արձակվել բանտից, իսկ ահա նրա եղբայրը մեկ այլ քրեական գործով կալանավորված է:

Ավելի վաղ Shamshya.com-ը գրել էր, որ դեկտեմբերի 11-ին կրակոցներ են հնչել Երեւանում: Ժամը 11:00-ի սահմաններում ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության համայնքային ոստիկանության գլխավոր վարչությանն էրեբունու բաժնում օպերատիվ տեղեկություններ են ստացվել, որ Արցախի փողոցի 47/2 հասցեում կրակոցներ են հնչել:

Ինչպես դեպքի վայրից հայտնում է ֆոտոլրագրող Գագիկ Շամշյանը, օպերատիվորեն ժամանել են ոստիկանության Էրեբունու բաժնի օպերատիվ խումբը՝ բաժնի պետ Դավիթ Պետրոսյանի, բաժնի պետի տեղակալ Վլադ Բագունցի գլխավորությամբ:

Ժամանել են նաեւ ՀՀ ՆԳՆ ոստիկանության Պարեկային ծառայության Երեւան քաղաքի գնդի 3-րդ գումարտակի պարեկները՝ գնդի հրամանատար Անդրանիկ Իսախանյանի, գումարտակի հրամանատար Արմեն Գասպարյանի եւ գումարտակի հրամանատարի տեղակալ Արտակ Սիրադեղյանի գլխավորությամբ:

Տեղում պարզվում է, որ ոստիկանության էրեբունու բաժնում ստացված օպերատիվ տեղեկությունը հավաստի է:

Դեպքի վայրում հայտնաբերվում է ատրճանակից կրակված 11 պարկուճ:

Դեպքի մասին ոստիկանության Էրեբունու բաժնից տեղեկությունը փոխանցել են ՀՀ քննչական կոմիտեի Երեւան քաղաքի քննչական վարչության Էրեբունի եւ Նուբարաշեն վարչական շրջանների քննչական բաժին, որտեղից ժամանել է քննչական խումբը՝ բաժնի պետ Համբարձում Պետրոսյանի եւ օրվա պատասխանատու հերթապահ քննիչի գլխավորությամբ:

Դեպքի փաստով էրեբունի եւ Նուբարաշեն վարչական շրջանների քննչական բաժնում նախաձեռնվել է քրեական վարույթ:

Տեղում աշխատում է նաեւ փորձաքրեագետը:

Ֆոտոլրագրողը հայտնում է, որ մինչ դեպքի վայրում աշխատում էր քննչական խումբը, ոստիկանության Էրեբունու բաժնի համայնքային ոստիկանները օպերատիվ տեղեկություններով պարզում են կրակոցներ արձակողի ինքնությունը ու նրա հետ տանում են բացատրական աշխատանքներ, ով ինքնակամ ներկայանում է Էրեբունու ոստիկանություն՝ ներկայացնելով նաեւ հանցագործության գործիք ատրճանակը:

Գ. Շամշյանի տեղեկություններով՝ կասկածյալը Երեւանի բնակիչ 46-ամյա Հովհաննես Մ.-ն է, ով Հայաստանում հայտնի գործարաններից մեկի սեփականատիրոջ որդին է, եւ նա վերջերս է ազատվել քրեակատարողական հիմնարկից:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ դեկտեմբերի 11-ից 12-ը ՀՀ ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումների կողմից բացահայտվել է հանցագործության 131 դեպք, որից 2-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ՄԱՐԶՊԵՏԸ ՄԵԿ ԱՆՁԻՑ ԳՆՈՒՄ Է ԱՐԵԼ

Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանը դեկտեմբերի 4-ին որոշել է. «հաշվի առնելով մայիսյան հեղեղումների պատճառով առաջացած արտակարգ իրավիճակի հետեւանքների վերացման եւ Աղստեւ գետի խնդրահարույց հատվածների մաքրման աշխատանքների հրատապությունը՝ թույլատրել ՀՀ Տավուշի մարզպետի աշխատակազմին գետի հոսանքների կարգավորման եւ ջրհեղեղների վերահսկման աշխատանքների ձեռքբերումն իրականացնել հրատապ մեկ անձի ընթացակարգով»): Ջրհեղեղը եղել է մայիսի 27-ին, անցել է գրեթե վեցուկես ամիս, այդ ընթացքում Տավուշի մարզպետը ինչո՞ւ ջրհեղեղի հետեւանքների վերացման, Աղստեւի մաքրման աշխատանքների մրցույթ չի անցկացրել, այլ որոշել է այդ աշխատանքների ձեռքբերումն իրականացել մայիսի 27-ի ջրհեղեղից վեցուկես ամիս հետո՝ դեկտեմբերի 4-ին, «հրատապ կարգով»), մեկ անձից:

ՆՈՐՈԳՈՒՄԸ ՀԵՏԱՁԳՎՈՒՄ Է

Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին հարցրել ենք՝ Տավուշի մարզպետի կողմից ստեղծված սուբվենցիոն ծրագրերի մշտադիտարկման հանձնաժողովը մարզում քանի՞ սուբվենցիոն ծրագիր է մշտադիտարկել, դրանցից քանիսո՞ւմ են խախտվել իրականացման ժամկետները, որո՞նք են այդ ծրագրերը: Մարզպետարանից պատասխանել են. «ՀՀ Տավուշի մարզում իրականացվող սուբվենցիոն ծրագրերը մշտադիտարկվում են, ինչպես մարզպետի որոշմամբ ստեղծված աշխատանքային խմբի, այնպես էլ ՏԿԵՆ-ի համապատասխան մասնագետների կողմից: 2024 թվականին մշտադիտարկման են ենթարկվել ինչպես 2024 թվականի, այնպես էլ նախորդ տարիներին հաստատված եւ 2024 թվական տեղափոխված ծրագրերը: Մշտադիտարկման թիվը գերազանցում է 250-ը, ծրագրերից մեկում առկա է ժամկետի ուշացում (Դիլիջանի մշակույթի տան հիմնանորոգում), որի համար ձեռնարկվել են միջոցներ 2025 թվականի առաջին եռամսյակում ավարտելու համար»:

ՀՈՂԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՎԱՏ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

Տավուշի մարզի գյուղատնտեսական նշանակության հողերը, ըստ հողային հաշվեկշռի,110 665,6 հեկտար են, որից վարելահող՝25485,3 հեկտար, բազմամյա տնկարկներ՝ 1981,8 հեկտար, այդ թվում խաղողի այգիներ՝ 1195,3 հեկտար,պտղատու այգիներ՝ 786,5 հեկտար, խոտհարքներ՝ 9400,6 հեկտար, արոտավայրեր՝ 63006 հեկտար, այլ հողատարածքներ՝10791,8 հեկտար: Տավուշի մարզպետարանից տեղեկացել ենք, որ Տավուշի մարզի համայնքներում առկա են հետեւյալ քանակի ինտենսիվ այգիներ՝ Բերդ - 17.87 հա, Իջեւան - 96 հա, Նոյեմբերյան - 166 հա, Դիլիջան - 1 հա: Մարզի համայնքներում ոռոգման կաթիլային համակարգի տվյալներն են՝ Բերդ - 27.1 հա, Իջեւան - 131.7 հա, Նոյեմբերյան - 155.45 հա, Դիլիջան- 0.07 հա:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՊԱԳԱ ՄԱՐԶՊԵՏԻ ՀԱՅՏԱՐԱՐԱԳԻՐԸ

Ի՞ՆՉ ՈՒՆԵՑՎԱԾՔ ՈՒՆԻ ԴԱՎԻԹ ԱՌՈՒՇԱՆՅԱՆԸ

Գրեթե քաղաքական կարիերա չունեցող Դավիթ Առուշանյանը հեղափոխությունից հետո, բախտի բերմամբ, թե դատահմամբ, ընտրվեց Գյումրի համայնքի ղեկավարի տեղակալ: Հենց այս նույն սկզբունքով Առուշանյանը դեկտեմբերի 11-ին մանդատը վայր դրեց՝ Շիրակի մարզպետ դառնալու համար: Դավիթ Առուշանյանը փոխարինելու է Մուշեղ Մուրադյանին, ով նույնիսկ չգիտեր, որ դաշտոնանկ է արվել:

Առուշանյանն առանձնապես հետաքրքիր կենսագրություն չունի.

2004-2006 թվականներին եղել է «Անի տուր» տուրիստական գործակալության փոխտնօրեն, ապա 2006-2021 թվականներին՝տնօրեն: 2021-2022 թվականներին Առուշանյանը դարձավ Գյումրի համայնքի ղեկավարի տեղակալ:

Նա 2018 թվականից «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության անդամ է:

Դավիթ Առուշանյանը 2022 թվականի հոկտեմբերի 26-ին ԱԺ պատգամավոր ընտրվեց «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության համապետական ընտրական ցուցակով:

Այսպիսով, ինչ ունեցված ունի Շիրակի մարզի ապագա մարզպետը.

Դավիթ Առուշանյանի՝ 2023 թվականի եկամուտների, անշարժ գույքի, ծախսերի եւ շահերի հայտարարագրի համաձայն՝ արդեն նախկին պատգամավորը ունի 2 բնակարան բազմաբնակարան շենքում եւ մեկ ավտոկայանատեղի: Բնակարանները համապատասխանաբար գտնվում են Երեւանի Կենտրոն եւ Դավթաշեն վարչական շրջաններում, իսկ ավտոկայանատեղին՝ Կենտրոն վարչական շրջանում:

Առուշանյանի հայտարարագրի համաձայն՝ նա 90 օրից ավելի շահագործում է բնակարան Շիրակի մարզի Գյումրի համայնքում, որը սեփականության իրավունքով իրեն չի պատկանում:

Տվյալ տարվա առկա տրանսպորտի միջոցները եղել են 2-ը՝ 2018 թվականին ձեռք բերված NISSAN մակնիշի մեքենան եւ 2016 թվականին ձեռք բերված RANGE ROVER մակնիշի մեքենան:

Դավիթ Առուշանյանի բանկային հաշիվների մնացորդները կազմել են 1 մլն 500 հազար դրամ եւ 500 հազար դրամ, ընդհանուր՝2 մլն դրամ: 2022 թվականին, որպես Գյումրի համայնքի ղեկավարի տեղակալ, ներկայացված հայտարարագրի համաձայն՝ Առուշանյանի կանխիկ դրամական միջոցներն ավելացել են գրեթե 900 հազար դրամով:

Շիրակի մարզի ապագա մարզպետի կանխիկ դրամական միջոցները կազմել են 25 հազար ԱՄՆ դոլար, 12 մլն դրամ եւ 18 հազար եվրո: Կանխիկ դրամական միջոցները 2022 թվականի համեմատ չնչին չափով նվազել են:

Որպես պատգամավոր՝ Առուշանյանի հաշվետու տարվա եկամուտները կազմել են 9 մլն 702 հազար դրամ, որն էլ աշխատանքի վարձատրություն է ՀՀ ԱԺ աշխատակազմից: Որպես Գյումրու համայնքի ղեկավարի տեղակալ՝ Դավիթ Առուշանյանը եկամուտ չի հայտարարագրել:

Ստացված վարկերի եւ փոխառությունների մայր գումարի մնացորդը հաշվետու տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 23 մլն 517 հազար դրամ: Վարկային պատմությունից հասկանում ենք, որ Դավիթ Առուշանյանն ունի հիփոթեքով բնակարան, որի մայր գումարի մնացորդը կազմել է 59 հազար ԱՄՆ դոլար:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ԱՆՑՈՒԴԱՐՁ

ԿԵՆՍԱԹՈՇԱԿԻ ՄԻՋԻՆ ՑՈՒՑԱՆԻՇ

«Ժողովուրդ» օրաթերթը բազմիցս անդրադարձել է այն թեմային, որ թոշակառուները մշտապես բողոքում են իրենց ստացած թոշակի չափից, քանի որ այն չի բավարարում հավուր պատշաճի ապրելու համար:

«Ժողովուրդ» օրաթերթը վիճակագրական կոմիտեից տեղեկացավ, թե տարեվերջի դրությամբ մայրաքաղաքում եւ ՀՀ մարզերում քանի թոշակառու է եղել, եւ ինչքան է եղել կենսաթոշակի միջին չափը:

Այսպիսով՝ մայրաքաղաք Երեւանում տարեվերջի դրությամբ եղել է 178.002 թոշակառու, Արագածոտնի մարզում՝ 19.117 թոշակառու, Արարատի մարզում՝ 36.973 թոշակառու, Արմավիրի մարզում՝ 35.787 թոշակառու, Գեղարքունիքի մարզում՝ 31.184 թոշակառու, Լոռու մարզում՝ 42.646 թոշակառու, Կոտայքի մարզում՝ 40.666 թոշակառու, Շիրակի մարզում՝ 38.870 թոշակառու, Սյունիքի մարզում՝ 23.119 թոշակառու, Վայոց ձորի մարզում՝ 9.503 թոշակառու, Տավուշի մարզում՝ 19.966 թոշակառու:

Նայելով ներկայացված թվերին՝ նկատում ենք, որ թոշակառուներն ամենաշատը մայրաքաղաք Երեւանում են, իսկ ամենաքիչը՝ Վայոց ձորի մարզում: Հարց է առաջանում, թե ինչու են Վայոց ձորում թոշակառուները քիչ: Բանն այն է, որ ՀՀ գյուղային բնակչության կյանքի միջին տեւողությունը կազմում է 77 տարեկանը, կանանց դեպքում՝ 80 տարեկանը, իսկ տղամարդկանց դեպքում՝74 տարեկանը: Մայրաքաղաքում բնակչության կյանքի միջին տեւողությունը կազմում է 77 տարեկանը, կանանց դեպքում՝ 81 տարեկանը, իսկ տղամարդկանց դեպքում՝73 տարեկանը:

Ինչ վերաբերում է կենսաթոշակի չափին, ապա մայրաքաղաք Երեւանում կենսաթոշակի միջին չափը 52.436 դրամն է, Արագածոտնի մարզում՝ 47.523 դրամը, Արարատի մարզում՝ 46.634 դրամը, Արմավիրի մարզում՝ 46.620 դրամը, Գեղարքունիքի մարզում՝ 47.296 դրամը, Լոռու մարզում՝ 47.830 դրամը, Կոտայքի մարզում՝ 47.814 դրամը, Շիրակի մարզում՝ 48.283 դրամը, Սյունիքի մարզում՝ 51.846 դրամը, Վայոց ձորի մարզում՝ 48.780 դրամը, Տավուշի մարզում՝ 48.629 դրամը:

Կրկին ակնհայտ է, որ կենսաթոշակի միջին չափն ամենաշատը մայրաքաղաքում է, իսկ ամենաքիչը՝ Արմավիրի մարզում:

Նշենք, որ ըստ վիճակագրական կոմիտեի հրապարակման՝ տվյալները 2023 թվականի են:

ԱՆՆԱ ՍՐԱՊԻՈՆՅԱՆ

«ՍԱ ԱՌԱՋԻՆ ՉՎԵՐԹԸ ՉԷ». ԵՐԵՎԱՆ–ԲԱՔՈՒ ԹՌԻՉՔԻ ՄԱՍԻՆ

Դեկտեմբերի 11-ին «Զվարթնոց» օդանավակայանից Երեւան-Բաքու թռիչք է իրականացվել: Այս մասին «Ժողովուրդ» օրաթերթին հայտնել է «Զվարթնոց» օդանավակայանի մամուլի խոսնակ Լուսինե Մողրովյանը:

«Միջազգային կազմակերպության կողմից պատվիրված չարթերային չվերթ է»,- նշել է խոսնակը:

«Զվարթնոցից» նշեցին նաեւ, որ տարբեր ժամանակներում տարբեր միջազգային կազմակերպությունների կողմից չարտերային չվերթեր են իրականացվում Բաքու եւ հակառակ ուղղությամբ: Սա առաջին չվերթը չէ:

● *Անցած 1 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 7 պատահար. 9 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ՏՆՏԵՍԱԿԱՆ

ԱՄՈՒԼՍԱՐԻ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ամուլսարի հանքը շահագործողների եւ Հայաստանում առեւտրային բանկերի միջեւ բանակցություններ կան, եւ եթե այդ բանակցությունները հաջողությամբ ընթանան (ես հուսով եմ՝ հաջողությամբ կընթանան), բանկերը կֆինանսավորեն շահագործողներին: Այդ մասին, երեկ՝ դեկտեմբերի 12-ին, Կառավարության ճեպազրույցի ժամանակ ասաց էկոնոմիկայի նախարար Գեւորգ Պապոյանը՝անդրադառնալով դիտարկմանը, թե Եվրասիական զարգացման բանկը ժամանակավորապես դադարեցրել է մասնակցությունն Ամուլսարի հանքի շահագործման նախագծին:

«Բարեբախտաբար, հանքերը վերջին տարիներին բավականին մեծ կապիտալ են կուտակել, որը հնարավորություն է տալիս նրանց, օրինակ, 150 մլն դոլար ֆինանսավորել: Սա մի քանի տարի առաջ, իհարկե, անհնար էր պատկերացնել, բայց հիմա դա շատ պատկերացնելի եւ հնարավոր է մեր բանկային համակարգի համար, ինչը շատ լավ բան է: Կան նաեւ որոշակի հարցեր՝ռիսկերի հետ կապված, ռիսկերի զսպման հետ կապված»,-ասաց Պապոյանը:

Նախարարը նաեւ տեղեկացրեց, որ Ամուլսարի նախագծի առնչությամբ ռիսկերն առավել լավ պատկերացնելու համար նախարարությունը հետազոտություն է պատվիրել աուդիտորական ընկերություններից մեկին:

«Մեկ շաբաթվա ընթացքում մեզ կներկայացնեն նաեւ հետազոտության արդյունքները, որից հետո բանկ-պետություն-հանք շահագործող միասնական որոշում կկայացնենք»,- ասաց նախարարը:

ԹՌԻՉՔԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՄ ՏՈՄՄԻ ՎԵՐԱԴԱՐՁ

Armenian Airlines-ը տեղեկացնում է ավիաընկերության օդանավի պլանային տեխնիկական աշխատանքների կատարման (C-check) ուշացման պատճառով թռիչքների վերսկսման ժամկետի փոփոխության մասին:

«Ավիաընկերությունը չեղարկված թռիչքների ուղեւորներին առաջարկում է տոմսի արժեքի ամբողջական փոխհատուցում կամ թռիչքի ամսաթիվը փոփոխություն:

Գումարի վերադարձի համար պետք է դիմել տոմսի գնման վայր կամ կազմակերպություն:

Թռիչքի ամսաթիվը փոխելու եւ այլ տեղեկություններ ստանալու համար խնդրում ենք դիմել help@armenianairlines.am էլ. հասցեին՝կցելով ավիատոմսը եւ թողնելով կոնտակտային հեռախոսահամար:

Ավիաընկերությունն աշխատում է թռիչքները հնարավորինս շուտ վերսկսելու ուղղությամբ եւ ակնկալում է, որ հաջորդ շաբաթ չվացուցակը կվերականգնվի:

Armenian Airlines-ը հայցում է ուղեւորների ներողամտությունը պատճառված անհարմարության համար»,-ասված է ընկերության տարածած հաղորդագրության մեջ:

ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ ԲԻԶՆԵՍԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ

«ԿՈՆՎԵՐՍ» ԲԱՆԿԸ ԵՎ IFC-Ն ՄԻԱՎՈՐՈՒՄ ԵՆ ՔԱՆՔԵՐԸ

«Կոնվերս» բանկը եւ Միջազգային ֆինանսական կորպորացիան (IFC) հայտարարում են համագործակցության մասին, որն ուղղված է Հայաստանում փոքր եւ միջին ձեռնարկությունների (ՓՄՁ) համար ֆինանսական միջոցների հասանելիության բարձրացմանը: Համագործակցության շրջանակում IFC-ն «Կոնվերս» բանկին կտրամադրի երաշխիք՝ 10 մլն ԱՄՆ դոլարին համարժեք վարկային պորտֆելի վերադարձելիության ռիսկը 50%-ով չեզոքացնելու համար:

«Կոնվերս» բանկն առաջին ֆինանսական կառույցներից մեկն է Հայաստանում, ում հետ IFC-ին համագործակցում է ՀՀ-ում ֆինանսական այս գործիքը ներդնելու հարցում:

Փոքր եւ միջին ձեռնարկությունները տնտեսական աճի, նորարարության եւ զբաղվածության հիմնական շարժիչ ուժերն են Հայաստանում եւ ապահովում են աշխատատեղերի գերակշռող մասը: Սակայն նրանք բախվում են 1.1 միլիարդ ԱՄՆ դոլարի ֆինանսավորման պակասի հետ, այդ թվում պայմանավորված այնպիսի մարտահրավերներով, ինչպիսիք են գրավի եւ ֆինանսական սահմանափակ հնարավորությունները:

«Մենք մեկնարկում ենք համագործակցություն «Կոնվերս» բանկի հետ՝լրացնելու համար Հայաստանի փոքր եւ միջին բիզնեսի ֆինանսավորման պակասը: Այս համագործակցությունը հանդիսանում է ռիսկերի փոխհատուցման՝ IFC-ի առաջին գործիքներից մեկը երկրում: Այն նպատակ ունի աջակցել այդ բիզնեսներին, այդ թվում՝ կանանց կողմից կառավարվող ձեռնարկություններին եւ գյուղատնտեսության ոլորտին՝ խթանելով կայուն աճը եւ նորարարությունը», -նշել է Մարսելո Կաստեժանոսը՝ Եվրոպայում IFC-ի ֆինանսական հաստատությունների խմբի տարածաշրջանային գլխավոր մենեջերը:

IFC-ի երաշխիքով ապահովված պորտֆելի 75%-ը ուղղվելու է վարկառուների թիրախային խմբերի ֆինանսավորմանը, ինչպիսիք են կանանց կողմից տնօրինվող ձեռնարկությունները, գյուղատնտեսության, առողջապահության, կրթության ոլորտներում կամ գյուղական համայնքներում գործող ՓՄՁ-ները, ինչպես նաեւ էներգաարդյունավետ ծրագրերի իրականացումը:

«Կոնվերս» բանկի Գլխավոր գործադիր տնօրեն Անդրանիկ Գրիգորյանն իր խոսքում նշեց. «Ուրախ ենք հայտնել այս նորարարական ծրագրի շրջանակում IFC-ի հետ մեր համագործակցության մեկնարկի մասին: Սա կարեւոր քայլ է՝ ուղղված Հայաստանի փոքր եւ միջին բիզնեսի համար ֆինանսավորման հնարավորությունների ընդլայնմանը՝ նպաստելով վերջիններիս կայուն զարգացմանը եւ աճին: Այս համագործակցության շնորհիվ մենք կկարողանանք ընդլայնել մեր վարկավորման ծավալները հատկապես տնտեսության թերսպասարկվող խմբերում ընդգրկված ՓՄՁ-ներին, միեւնույն ժամանակ նվազեցնելով մեր ՓՄՁ պորտֆելի վարկային ռիսկերը»:

«Կոնվերս» բանկի մասին

«Կոնվերս» բանկը հանդիսանում է դինամիկ զարգացող ունիվերսալ բանկ, որի հիմնական գործունեությունն ուղղված է մանրածախ բիզնեսի եւ ՓՄՁ-ների ֆինանսավորմանը: Բանկը մատուցում է մանրածախ, կորպորատիվ ու ներդրումային ֆինանսական ծառայությունների լայն շրջանակ թե՛ ֆիզիկական անձանց, թե՛ բիզնեսին իր ընդարձակ ցանցի միջոցով, որը ներառում է Բանկի 34 մասնաճյուղերը մոբայլ ու առցանց բանկային ծրագրերի հետ միասին:

IFC-ի մասին հավելյալ տեղեկատվության համար խնդրում ենք այցելել www.ifc.org.

ԿՈՆՖԼԻԿՏՆԵՐ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐ՝ՀԱՎԵԼՎԱԾԻ ՊԱՏՃԱՌՈՎ

ՎԱՐՈՐԴՆԵՐԸ ԲՈՂՔԻ ԱԿՑԻԱ ԵՆ ԻՐԱԿԱՆԱՑՐԵԼ

Օնլայն տաքսիստները բողոքի ակցիա են կազմակերպել Հրազդանի կիրճում. նրանք բողոքում են գործող պայմաններից ու սակագներից:



Տաքսիստներից մեկը ներկայացրել է իրենց պահանջները՝ նշելով. «Օնլայն տաքսիստները պաշտպանված չեն, առավոտյան արթնանում ենք, տեսնում ենք՝հեղուկ գազի գինը 170-ից դարձել է 220 դրամ: ԿԲ-ն գների կայունություն չի ապահովում: ԿԲ-ն հանդուրժում է օնլայն տաքսիների կեղծ բաղադրիչը, նկատի ունեմ՝տարիֆը: Ոչ մի վերահսկողություն չկա, օպերատորն ասում է՝ պահանջարկը կա, տարիֆը բարձրանում է: Ո՞վ է վերսհսկում՝ այդ պահանջարկը, թե չկա, ինչքանով կա եւ որքանով է համապատասխանում այն ալգորիթմին, որը ինքը հիմքում դրել է: Օրինակ, եթե դուք տեղափոխվում եք 10 կմ, եւ 20 րոպե, գիտեք որպեի արժեքը 20 դրամ է, կմ-ի արժեքը 80 դրամ է, դուք հստակ կարող եք ստուգել՝արդյոք ճիշտ է հաշված, թե չէ: Բայց եթե մեջը կա 1200 դրամ մինիմալ տարիֆի բաղադրիչ, դուք կարո՞ղ եք ստուգել՝ այդ տարիֆն արդար է, թե ոչ: Իսկ գուցե ոչ թե + 1200 դրամ պետք է լիներ, այլ + 800 դրամ: Ո՞նց վարորդը ստուգի՝ օպերատորն արդար է, թե ոչ: Եթե չկա վերահսկողություն, ուրեմն դա կեղծ բաղադրիչ է»:

Վարորդներից մեկն էլ լրատվամիջոցների հետ զրույցում նշեց՝ «Յանդեքս»-ում գոյություն ունի, այսպես կոչված, տեխաջակցություն, սակայն վարորդների 99%-ին այդ տեխաջակցությունը չի աջակցել երբեւէ:

««Յանդեքս»-ը թույլ է տալիս օրական երկու անգամ օգտվել «տուն» ծրագրից: Այսինքն՝ սեղմում ես «տուն» կոճակը դեպի տան հասցե, եւ ինչ պատվեր որ լինի, ինքը տալու է: Իմ տունը Աջափնյակում է, բայց մոտենալուն պես՝ հաճախորդը պատվերի մեջ կետ է ավելացնում՝ հետադարձ դեպի էջմիածին: Ծրագիրը տեսնում է, որ ես գնում եմ տուն, բայց թույլ է տալիս, որ հաճախորդը նման բան անի: Ինչո՞ւ է դա թույլ տալիս: Արդյունքում իմ ու հաճախորդի մեջ կոնֆլիկտ է առաջանում, հաճախորդը ինձ ասում է՝տաքսի ես քշում, ինձ հետաքրքիր չի»,- ասաց վարորդը:

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՄՇԱԿՈՒՅԹ

ՏԱՐՎԱ ԵՐԻՏԱՍԱՐԴ ՄԱՅՐԱՔԱՂԱՔ. ՄԻՋՈՑԱՌՈՒՄ

ԲԱՆԱԼԻՆ ԳԱՎԱՌԻՑ ՓՈԽԱՆՑՎԵԼ Է ԱՊԱՐԱՆԻՆ

Երիտասարդական մայրաքաղաքի խորհրդանշական բանալին հանդիսավոր արարողությամբ Գավառից հանձնվել է ՀՀ 2025 թ. երիտասարդական մայրաքաղաք Ապարանին: Այս մասին հայտնում են ԿԳՄՄՆ-ից:

Միջոցառմանը ներկա են եղել ԿԳՄՍ նախարարի տեղակալ Արթուր Մարտիրոսյանը, տեղական իշխանությունների, Ապարան համայնքի ղեկավար կազմի ներկայացուցիչներ:

ԿԳՄՍ նախարարի տեղակալ Արթուր Մարտիրոսյանը շնորհակալություն է հայտնել Գավառ համայնքի ղեկավարությանը, համայնքապետարանի ողջ անձնակազմին, հասարակական եւ երիտասարդական կառույցների ներկայացուցիչներին ՀՀ 2024 թվականի երիտասարդական մայրաքաղաք տիտղոսը պատվով կրելու, երիտասարդների կողքին լինելու եւ ծրագրին համահունչ՝ մարզամշակութային հագեցած միջոցառումներ անցկացնելու համար:

Նա ընդգծել է՝ 2014 թվականից իրականացվող ծրագիրը տարեցտարի նոր թափ է հավաքում, եւ այդ համատեքստում Գավառը՝ որպես երիտասարդական մայրաքաղաք, որակական նոր նշաձող է սահմանել: «Գավառը հաղթեց հետեւողականության, հաստատակամության, իր հնարավորությունները շարունակաբար լավարկելու եւ տոկունություն ցուցաբերելու շնորհիվ: Գավառն ապացուցեց, որ մեր հնագույն ժառանգությունը մեզ պետք է ոգեշնչի նոր ձեռքբերումների ու առաջընթացի համար»,- ասել է ԿԳՄՍ նախարարի տեղակալը:

Որպես կարեւոր շեշտադրում՝ Արթուր Մարտիրոսյանը նշել է՝ ծրագրի գլխավոր նպատակն այն է, որպեսզի տվյալ համայնքը, հռչակվելով տարվա երիտասարդական մայրաքաղաք, այդ շունչը պահպանի ոչ միայն ընթացիկ տարում, այլեւ հետագայում եւս՝ որպես ձեւավորված ավանդույթ:

Նա հատկապես ընդգծել է, որ համայնքային կյանքի աշխուժացումն ու երիտասարդական ներուժի բացահայտումն այս ծրագրի կարեւոր բաղադրիչներից են, ինչը շատ է կարեւորվում Կառավարության կողմից: Դրա վկայությունը, ըստ Արթուր Մարտիրոսյանի, Քաղաքացու օրվա շրջանակում վարչապետ Նիկոլ Փաշինյանի հանդիպումն է Գավառի երիտասարդների հետ:

ԿԳՄՍ նախարարի տեղակալն իրազեկել է նաեւ Կառավարության կողմից «Երիտասարդական քաղաքականության մասին» օրենքին հավանություն տալու մասին եւ նշել, որ հաջորդիվ կլինեն Ազգային ժողովում հանրային լսումներ, որոնց կմասնակցեն նաեւ տարբեր կառույցների գործընկերներ:

«Ակնկալում ենք, որ օրենքի ընդունումից հետո ավելի արդյունավետ կդառնա երիտասարդական կենտրոնների եւ երիտասարդական աշխատողների գործունեությունը, միաժամանակ համայնքային ղեկավարության եւ հանրության շրջանում ավելի կընդգծվի դրանց կարեւորությունը: Մենք էլ ջանքեր չենք խնայի, որ երիտասարդական կենտրոնները համապատասխանեն այն ուղեցույցին, որը մշակվում է քաղաքացիական հասարակության եւ միջազգային գործընկերների հետ, որպեսզի մեր երիտասարդները ստանան անհրաժեշտ ծառայությունները»,- ասել է Արթուր Մարտիրոսյանը:

Խոսքը եզրափակելով՝ նա հաջողություն է մաղթել Ապարան համայնքին, իսկ Գավառին հորդորել պահպանել նշաձողը:

Ներկաներին ողջունել են նաեւ Գեղարքունիքի մարզպետի տեղակալ Ջանիկ Բազեյանը, Գավառ համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Գրիգոր Դաշտոյանը եւ Ապարան համայնքի ղեկավարի տեղակալ Հրայր Մկրտչյանը:

ՀՀ ԿԳՄՄՆ

ՀԱՅ-ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍ

«ԵՐԵԿ ԵՎ ԱՅՍՕՐ. ԺԱԿ ԴԸ ՄՈՐԳԱՆԻ ՀԵՏՔԵՐՈՎ»

Հայաստանի պատմության թանգարանում բացվել է «Երեկ եւ այսօր. Ժակ դը Մորգանի հետքերով» խորագրով միջազգային ցուցադրությունը, որը կգործի մինչեւ 2025 թվականի մարտի 11-ը:

Ցուցահանդեսի շրջանակում Հայաստանում առաջին անգամ ներկայացվել են 19-րդ դարի 80-ական թվականներին հայտնի հնագետ Ժակ դը Մորգանի կողմից Հայաստանի հյուսիսային շրջաններում՝ Ախթալայում, պեղված հնագիտական ժառանգության ուշագրավ նմուշները, որոնք պահվում են Ֆրանսիայի ազգային հնագիտության թանգարանում:

Ֆրանսիայից բերված 5 ցուցանմուշները համադրվել են 90-ական թվականներին Ժակ դը Մորգանի հետքերով հայ-ֆրանսիական հնագիտական արշավախմբերի գործունեության ընթացքում հայտնաբերված եւ ՀՀ տարբեր թանգարաններում պահվող ավելի քան վեց տասնյակ նմուշների հետ, որոնց մի մասն առաջին անգամ է ցուցադրվում:

Բացմանը ներկա են եղել ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարի տեղակալ Ալֆրեդ Քոչարյանը, ՀՀ-ում Ֆրանսիայի արտակարգ եւ լիազոր դեսպան Օլիվիե Դը Կոտինյին, Ֆրանսիայի ազգային հնագիտության թանգարանի տնօրեն Ռոզ-Մարի Մուսսոն, արվեստասեր հանրության ներկայացուցիչներ:

Ցուցահանդեսը կազմակերպվել է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի եւ Ֆրանսիայի մշակույթի նախարարությունների աջակցությամբ՝ Հայաստանի պատմության թանգարանի եւ Ֆրանսիայի ազգային հնագիտության թանգարանի /Սեն Ժերմեն ան Լեյի ամրոց/ համագործակցությամբ, Հայաստանում Ֆրանսիայի դեսպանատան նախաձեռնությամբ:

Շնորհավորելով բացառիկ ցուցադրության բացման կապակցությամբ՝ ԿԳՄՍ նախարարի տեղակալ Ալֆրեդ Քոչարյանը կարեւորել է թանգարանների միջազգային կապերի ընդլայնումը:

«Հայաստանի պատմության թանգարանում միջազգային ցուցահանդեսների կազմակերպման լավ ավանդույթ է ձեւավորվել: Վերջին տարիներին թանգարանը նկատելիորեն ակտիվացրել է համագործակցությունը միջազգային գործընկերների հետ, ինչը կարեւոր ուղղություն է թանգարանային ոլորտի պետական քաղաքականության տեսանկյունից: Հատկապես Ֆրանսիայի հետ համագործակցության օրակարգը շատ լայն է, եւ առաջիկայում եւս նոր ու հետաքրքիր նախաձեռնություններ ենք սպասում»,- ասել է նա:

Հայաստանի պատմության թանգարանի տնօրեն Դավիթ Պողոսյանը նշել է, որ ֆրանսիական կողմի հետ համագործակցությունը շարունակական է լինելու. ՀՊԹ-ն համագործակցության հուշագիր է կնքել նաեւ Լուվրի թանգարանի հետ, եւ հաջորդ տարի նախատեսված են համատեղ ցուցադրություններ:

ՀՀ ԿԳՄՄՆ
Հասարակայնության հետ կապերի եւ տեղեկատվության վարչություն

ՄԱՐԶԱԿԱՆ

«ԻՆՏԵՐԸ» ՁԳՏՈՒՄ Է ԹՐԵԲԼ ՆՎԱՃԵԼ

Իտալիայի չեմպիոն «Ինտերի» կիսապաշտպան Հենրիխ Մխիթարյանին հարցրել են միլանյան թիմի թրեբլ նվաճելու նպատակների մասին:

«Թրեբլն այն է, ինչին ձգտում ենք: Մենք փորձում ենք խաղալ այնպես, ինչպես նախորդ մրցաշրջանում: Բայց նվաճումներին պետք է գնալ քայլ առ քայլ: Այժմ մենք մտածում ենք «Բայերի» դեմ խաղի մասին, իսկ հետո արդեն՝ «Լացիոյի» հետ դիմակայության: «Բայերը» շատ ուժեղ է, ինչը ցույց տվեց նախորդ մրցաշրջանում, բայց այս տարի էլ նույնքան ուժեղ է»,- RAI Radio-ի հետ զրույցում ասել է Մխիթարյանը:

ԲԱՍԿԵՏԲՈԼԻ ԹԻՄԸ ՆՈՐ ԳԼԽԱՎՈՐ ՄԱՐԶԻՉ ՈՒՆԻ

Արեգ Վաթյանը նշանակվել է Հայաստանի բասկետբոլի մինչեւ 18 տարեկանների հավաքականի գլխավոր մարզիչ՝ նախապատրաստվելու 2025 թվականի ամռանը կայանալիք Եվրոպայի C դիվիզիոնի առաջնությանը:

Վաթյանն աշխատել է տարբեր տարիքային խմբերի հավաքականների հետ:

2017 թվականին Արեգ Վաթյանը գլխավորել է Հայաստանի մինչեւ 16 տարեկանների հավաքականը, որը դարձել է Եվրոպայի C դիվիզիոնի չեմպիոն: 2022 թվականին նրա ղեկավարությամբ աղջիկների նույն տարիքային հավաքականը նվաճել է Եվրոպայի C դիվիզիոնի փոխչեմպիոնի տիտղոսը:

2024 թվականին Հայաստանի մինչեւ 16 տարեկանների հավաքականը նվաճել է Եվրոպայի առաջնության բրոնզե մեդալ:

Մ18 հավաքականը կմրցի Եվրոպայի C դիվիզիոնի առաջնությունում, որը կանցկացվի հուլիսի 19-27-ը Դուրեսում (Ալբանիա):

ՈՐՏԵՂ ԿԱՆՑԿԱՑՎԻ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆԸ

Կայացավ ֆուտբոլի միջազգային ֆեդերացիայի (ՖԻՖԱ) կոնգրեսը, որի ընթացքում պաշտոնապես հայտարարվեցին 2030 եւ 2034 թվականների ֆուտբոլի աշխարհի առաջնությունների անցկացման վայրերը:

2030 թվականի աշխարհի առաջնությունը կանցկացվի Մարոկկոյում, Պորտուգալիայում եւ Իսպանիայում: Եվս երեք հանդիպում կանցկացվի Հարավային Ամերիկայում՝ Ուրուգվայում, Պարագվայում եւ Արգենտինայում:

2034 թվականի աշխարհի առաջնությունը տեղի կունենա Սաուդյան Արաբիայում: Մրցաշարը կանցկացվի ձմռանը՝ հաշվի առնելով տարածաշրջանի կլիմայական առանձնահատկությունները:

Նշենք, որ 2030 թվականին կլրանա 100 տարին ֆուտբոլի պատմության առաջին աշխարհի առաջնության անցկացումից: Այն կայացել է Ուրուգվայում:

● *Դեկտեմբերի 15-ին՝ ժամը 19:00-ին, Հ. Ղափլանյանի անվան պետական դրամատիկական թատրոնում կցուցադրվի «Երեք ընկեր» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝ 3.000-6.000 դրամ:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ԻՐԱՎՈՒՆՔ

ՀԱՐՑ. Ո՞րն է աշխատանքային պայմանագրի կնքման կարգը:

Մոնիկա Դումաշյան (19 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Գրավոր աշխատանքային պայմանագիրը կնքվում է երկու օրինակից կողմերի, իսկ մինչեւ տասնչորս տարեկան աշխատողների հետ կնքվող աշխատանքային պայմանագրերի դեպքում՝ ծնողներից մեկի կամ որդեգրողի կամ խնամակալի ստորագրությամբ մեկ փաստաթուղթ կազմելու միջոցով, որի մեկ օրինակը գործատուն հանձնում է աշխատողին, իսկ մինչեւ տասնչորս տարեկան անձի մասնակցությամբ աշխատանքային հարաբերությունների ծագման դեպքում՝ ծնողներից մեկին կամ որդեգրողին կամ խնամակալին: Աշխատանքային պայմանագիրը կարող է կնքվել նաեւ կողմերի էլեկտրոնային ստորագրությամբ: Էլեկտրոնային ստորագրությամբ կնքված աշխատանքային պայմանագրի մեկ օրինակը էլեկտրոնային եղանակով փոխանցվում է աշխատողին, իսկ մինչեւ տասնչորս տարեկան անձի մասնակցությամբ աշխատանքային հարաբերությունների ծագման դեպքում՝ ծնողներից մեկին կամ որդեգրողին կամ խնամակալին:

Աշխատանքի անցնելուց առաջ գործատուն կամ նրա լիազորած անձը պարտավոր է աշխատանքի ընդունվող անձին պատշաճ ծանոթացնել աշխատանքի պայմաններին, կոլեկտիվ պայմանագրին (դրա առկայության դեպքում), ներքին կարգապահական կանոններին, աշխատավայրում նրա աշխատանքը կանոնակարգող գործատուի այլ իրավական ակտերին:

ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Աշխատողը պարտավոր է աշխատանքային պայմանագրում նշված օրն անցնել աշխատանքի: Աշխատանքային պայմանագրում նշված օրն անհարգելի պատճառով աշխատանքի չներկայանալը հիմք է աշխատանքային պայմանագրի լուծման համար:

Էջը՝ ԱԼՎԱՐԴ ԿՈՇԿԱԿԱՐՅԱՆԻ

ՏՆՏԵՍԱԿԱՆ

ՀԱՐՑ. Ո՞րն է Մաքսային միության ապրանքը:

Լեռնիկ Գրիգորյան (49 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Մաքսային միության մաքսային օրենսգրքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 37-րդ կետի համաձայն՝ Մաքսային միության ապրանքները Մաքսային միության մաքսային տարածքում գտնվող ապրանքներն են, որոնք ամբողջությամբ արտադրվել են Մաքսային միության անդամ պետությունների տարածքներում, ներմուծվել են Մաքսային միության մաքսային տարածք եւ ստացել Մաքսային միության ապրանքների կարգավիճակ՝ նշված օրենսգրքին եւ (կամ) Մաքսային միության անդամ պետությունների միջազգային պայմանագրերին համապատասխան, պատրաստվել են Մաքսային միության անդամ պետությունների տարածքներում նշված ենթակետի երկրորդ եւ երրորդ պարբերություններում նշված ապրանքներից եւ (կամ) օտարերկրյա ապրանքներից եւ, նշված օրենսգրքին եւ (կամ) Մաքսային միության անդամ պետությունների միջազգային պայմանագրերին համապատասխան, ձեռք են բերել Մաքսային միության ապրանքների կարգավիճակ:

ՀՀ պետական եկամուտների կոմիտե

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Մաքսային միության մաքսային օրենսգրքի 296-րդ հոդվածի համաձայն՝ «Վերաարտահանում» մաքսային ընթացակարգի դեպքում Մաքսային միության մաքսային տարածք ավելի վաղ ներմուծված ապրանքները կամ ապրանքների վերամշակումից հետո ստացվելիք արդյունքները, որոնք ձեւակերպվել են «մաքսային տարածքում վերամշակում» մաքսային ընթացակարգով, այդ տարածքից արտահանվում են առանց ներմուծման մաքսատուրքերի գումարների վճարման եւ (կամ) ներմուծման մաքսատուրքերի վճարված գումարների վերադարձման (հաշվանցման) եւ առանց ոչ սակագնային կարգավորման միջոցների կիրառման:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ «Ժողովուրդ» օրաթերթի

Իհարկե, հաճախորդը միշտ ճիշտ է, բայց թերեւս այս պարագայում կարելի է հասկանալ նաեւ վաճառողին եւ ապրանքները «մի քիչ խղճով խառնել»: ☺

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝ (060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ա.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

	Շիրակ	-5 - 9 -1 + 2
	Կոտայքի լեռներ	-6 - 8 -1 +1
	Կոտայքի նախալեռներ	-3 - 5 +3 + 5
	Գեղարքունիք	-7 - 11 - 2 + 1
	Լոռի	- 4 - 8 +1 + 4
	Տավուշ	0 - 4 +3 + 6
	Արագածոտնի լեռներ	- 6 - 9 0 - 2
	Արագածոտնի նախալեռներ	-1 - 4 + 4 + 7

	Արարատ	0 - 4 +6 + 8
	Արմավիր	-1 - 5 + 5 + 7
	Վայոց ձորի լեռներ	-6 - 10 0 - 2
	Վայոց ձորի նախալեռներ	-1 + 2 +12 + 14
	Սյունիքի հովիտներ	0 + 3 + 8 + 10
	Սյունիքի նախալեռներ	- 4 - 8 - 1 + 4
	ԼՂՀ	- 3 - 7 0 + 6
	Երեւան	0 - 2 + 2 + 4

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **12.12.2024**
Տպաքանակ՝ 3968
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ. Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, Գ նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*